ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Բիոլոգ. և գյուղատնտ. գիտություններ X, № 4, 1957 Биол. и сельхоз. науки

Հոբելյաններ և տարեթվեր

ՆԻԿՈԼԱՅ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՎԻՉ ԿՐԱՍԻԼՆԻԿՈՎ

(Ծննդյան 60-ամյակի առթիվ)

Մեր երկրի գիտական հասարակայնությունը 1957 թվականի մարտի 29-ին Մոսկվայում նշեց ՍՍՌՄ Գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ, պրոֆեսոր Նիկոլայ Ալեքսանդրովիչ Կրասիլնիկովի հոբելյանը՝ նրա ծննդյան 60-ամյակի կապակցությամբ։

Ի դեմս Ն. Ա. Կրասիլնիկովի սովետական գիտությունը մեծարեց խոշորագույն միկրոբիոլոգներից մեկին, միկրոբիոլոգիայի տարբեր բնագավառներում աչքի ընկնող հաջողություններ ձեռք բերած գիտնականին, ջերմ հայրենասերին։

Ն. Ա. Կրասիլնիկովի հետազոտությունները նշանակալից իրագործություններ էին միկրոբիոլոգիայի զարգացման պատմության մեջ։ Լարված ստեղծագործական աշխատանքի 30 տարիների ընթացքում Ն. Ա. Կրասիլնիկովը հրապարակել է ավելի քան 150 աշխատություն, այդ թվում միկրոբիոլոգիայի ակտուալ հարցերին նվիրված մի շարք հիմնական մենագրություններ։ Ճառագայթասնկերի և նրանց ցեղակից օրգանիզմների ընդարձակ խումբը ի դեմս Ն. Ա. Կրասիլնիկովի գտավ այնպիսի հետազոտողի, որը վեր ածեց նրան ժամանակակից միկրոբիոլոգիայի կարևորագույն սիստեմատիկական կատեգորիաներից մեկը։ Ն. Ա. Կրասիլնիկովի աշխատություններն այդ բնագավառում կլասիկ են և առաձեռն ուղեցույց են ակտինոմիցետներն ուսումնասիրող գիտնականների համար։

Զարմանալիորեն ընդարձակ է Ն. Ա. Կրասիլնիկովի գիտական հետազոտությունների բնագավառը։ Միկրոօրգանիզմների մորֆոլոգիա, սիստեմատիկա, էկոլոգիա և ֆիզիոլոգիա—ահա այն բնագավառները, որտեղ նա ստեղծել է աչքի ընկնող մի շարք աշխատություններ։ Հետևելով ռուսական բիոլոգիական գիտության պանծալի տրադիցիաներին, Ն. Ա. Կրասիլնիկովը իր հետազոտություններում միշտ մնացել է որպես երևույթները լայն բիոլոգիական դիրքերից լուսաբանող բիոլոգ-բնագետ։

Ն. Ա. Կրասիլնիկովի անվան հետ է կապված միկրոօրգանիզմների դասակարգման նոր, ռուսական մորֆոլոգիական շկոլայի լավագույն սկզբունքների վրա հիմնված սիստեմի ստեղծումը։ Միկրոօրգանիզմների ներ- և միջտեսակային փոխհարաբերությունների արինաչափությունների մասին ուսմունքը, որ զարգացնում է ներկայումս Ն. Ա. Կրասիլնիկովը, հիմք է ստեղծում միկրոօրգանիզմների սիստեմատիկայի, էկոլոգիայի կարևորագույն հարցերը մշակելու գործում, ինչպես նաև նոր մոտեցում ունենալու նոր անտիբիոտիկներ ստանալու համար։

Համաշխարհային հռչակ են ձեռք բերել Ն. Ա. Կրասիլնիկովի աշխատանքները միկրոբների անտագոնիզմի և նոր անտիբիոտիկներ ստանալու բնագավառում։ Շնորհիվ Ն. Ա. Կրասիլնիկովի աշխատությունների, այդ բնագավառում ամուր հաստատված է հայրենական գիտության առաջնությունը մի շարք ակտուալ բաժինների գծով։

Խոշոր են Ն. Ա. Կրասիլնիկովի ծառայությունները գիտական կադրեր պատրաստելու և մեր երկրի միկրոբիոլոգների գործունեությունը կոորդինացնելու գործում։ Նրա լաբորատորիաներում միշտ կարելի է հանդիպել մեր երկրի ամենահեղինակավոր անկյուններից եկած աշխատակիցների։ Ն. Ա. Կրասիլնիկովը գործուն մասնակցություն է ցուցաբերում միութենական ռեսպուբլիկաներում միկրոբիոլոգիական հետազոտություններն ուժեղացնելու գործում։

Հայաստանի միկրոբիոլոգների համար առանձնապես գնահատելի ու հիշարժան է Ն. Ա. Կրասիլնիկովի գործունեությունը՝ Հայաստանում միկրոբիոլոգիայի զարգացման ուղղությամբ։ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Միկրոբիոլոգիայի սեկտորն իր

հաջողությունների համար շատ բան է պարտական Ն. Ա. Կրասիլնիկովի գործուն օգնությանը նրանք, ովքեր աշխատել են Ն. Ա. Կրասիլնիկովի լաբորատորիայում, երբեք չեն մոռանա այն ստեղծագործական թափը, պահանջկոտությունը, անշահախնդիր նվիրվածությունը գործին, որոնցով նա վարակում էր իր կոլեգիաներին։

Ն. Ա. Կրասիլնիկովը գտնվում է ստեղծագործական ուժերի ծաղկման շրջանում, և կարելի է շտապակուսել, որ նա դեռ երկար ու երկար տարիներ կլինի առաջավոր սովետական գիտության առաջին շարքերում։

Հ. Կ. ՓԱՆՈՍՅԱՆ,

Է. Գ. ԱՃԻՐԻԿՅԱՆ։

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐՍԳԴԱՐԱՆ